ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՆՈՐՔ» ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵԱՆ 0047, Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ 32/6

հեռ. (+ 374 10) 65 08 60
Ֆաքս (+374 10) 65 20 02
էլ. փոստ g_sayadyan@moh.am
norq-klinik@mail.r

22.05.2014թ.
№ 161/14

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 ծածկագրով գնման ընթացակարգի
գրանցված հնարավոր Մասնակիցներին
apranq-11-1@shh.gnumner.am

Հարգելի գործընկերներ

<<Նորք հոգեբուժական կենտրոն>> ՓԲԸ-ի 2014թ. կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր ընկերությունների միջև կնքված համապատասխան շրջանակային համաձայնագրերի շրջանակներում ձեռքբերելու վառելիք: Սույն գնման ընթացակարգի ծածկագիրն է ՆՀԿ-ՇՀԱՊՁԲ-14/2:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Գ. Հովսեփյան 32/6 հասցեով, ընդունարան, մինչև 03 հունիսի 2014թ. ժամը 10:00-ն:

Հայտերը կբացվեն <<Նորք հոգեբուժական կենտրոն>> ՓԲԸ-ի շենքում, ք. Երևան, Գ. Հովսեփյան 32/6 հասցեով, 03 հունիսի 2014թ. ժամը 10:00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել սահմանված կարգով կազմված ծրարով շրջանակային համաձայնագրեր կնքելու նպատակով հայտարարված հրավերին համապատասխան:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը, ընթացակարգին մասնակցելու դիմումի և գնային առաջարկի օրինակելի ձևերը: Մասնակիցը կարող է գնային առաջարկը ներկայացնել օրինակելի ձևերից տարբերվող այլ ձևերով, սակայն << գնումների մասին օրենսդրության և սույն հրավերով ներկայացված օրինակելի ձևերի բովանդակային պայմանների պարտադիր պահպանմամբ, հակառակ դեպքում մասնակցի գնային առաջարկը ենթակա է մերժման:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Կենտրոնի տնօրենի ժ/պ Գ. Սայադյան